# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

## ՈՐՈՇՈՒՄ

<<20-->> հունիսի 2025թ. ՆՄՈ/612Ա

ք. Արմավիր

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 14-Ի ՆՄՈ/282 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով.

**որոշում եմ՝**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2022 թվականի ապրիլի 14-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզում արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասները գնահատող նոր հանձնաժողով ստեղծելու, հանձնաժողովի կազմը և աշխատակարգը հաստատելու մասին» ՆՄՈ/282 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝
   1) որոշման N1 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՄԱՐԶՊԵՏ՝** **Ա. ՄԵԽԱԿՅԱՆ**

2025-06-20 16:16:53 GMT +4
Հավաստված է էլեկտրոնային կնիքով
eID

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզպետի
2025 թվականի հունիսի 20 -ի
ՆՄՈ/ 612 -Ա որոշման

«Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզպետի
2022 թվականի ապրիլի 14-ի
ՆՄՈ/282 որոշման

**Կազմ**
**Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզում արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասների գնահատող նոր հանձնաժողովի**

**Հանձնաժողովի նախագահ՝**

Բ. Նիկողոսյան՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի տեղակալ.

**Հանձնաժողովի նախագահի տեղակալ՝**

Գ. Հովհաննիսյան՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության պետ.

**Հանձնաժողովի քարտուղար՝**

Գ. Գասպարյան՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ.

**Անդամներ՝**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչությունից 2 (երկու) մասնագետ.

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչությունից 2 (երկու) մասնագետ.

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչությունից 2 (երկու) մասնագետ.

Առողջապահական համակարգից 1 (մեկ) վնասվածքաբան, 1 վարակաբան.

Անասնաբուժական ծառայությունից 1 (մեկ) անասնաբույժ.

«Ոռոգում ջրառ» փակ բաժնետիրական ընկերությունից 1 (մեկ) մասնագետ.

«Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության Արմավիրի գազաֆիկացման և գազամատակարարման մասնաճյուղից 1 (մեկ) մասնագետ.

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության «Մուսալեռ» մասնաճյուղի «Արմավիր» էլեկտրացանցից 1 (մեկ) մասնագետ.

«Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերությունից 1 (մեկ) մասնագետ.

Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Արմավիրի մարզային փրկարարական վարչությունից 2 (երկու) մասնագետ.

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի Արմավիրի տարածքային բաժնից 1 (մեկ) մասնագետ:»:

**ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ**

**ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ Ա. ՀԱԿՈԲՅԱՆ**